

ՀԱՅԵՐԵՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանասիր. գիտ. դոկտոր Վ. Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

1. ԿՍՄՆ < հ. հ. *ak¹¹¹ en

Հայերենում գյուղատնտեսության (երկրագործության) բնագավառի զգալի թվով բառեր ունեն հ.-հ. ծագում (անդ ռդաշտ, հանդա, աբաու, աբտ, գաբի, նվան, կորի ռարտամիջյան առու», հերկ, ցախ(ան) և այլն): Քիչ չեն նաև այնպիսիները, որոնց հ.-հ. ծագումը դեռևս բացահայտված չէ կամ ոչ հավաստի ձևով է մեկնաբանված: Հ.-հ. ծագում ունի նաև կամեն («կալսիչ, օծծիչ») բառը:

Կամեն բառը հին գրավոր աղբյուրներում հանդիպում է մեկ-երկու անգամ՝ կամուես, կամացն: Բ դեպ նշենք, որ ժամանակին բանասեր Ա. Վարդանյանը Բուզանդի հիշյալ կամացն ձևը դիտում է սխալագրություն և ուղղում՝ կամանց (կամեն, հոգն. ուղղ. կամուն, սեռ. կամանց): Որն ընդունելի պիտի համարել², Բառը հին հայերենում գործածվել է նաև բարդության մեջ՝ կամասայլի (կամասայլ), կամասայլից, կամեավար և այլն³:

Հ. Աճառյանը կամեն-ը համարում է «անստույգ բառ», թեև փորձում է այն կապել ցեղակից լեզուներից հայավ. гоумино, ոուս. гумно և այլ ձևերի հետ, որովհետև (ինչպես ինքն է գրում) «բառ Pogodin-ի (տե՛ս Berneker, I, 362) այս բառերը ներկայացնում են *gumino-բարդությունը, ուր *gu—<

հնի. *g ous «կապ, լից», mjoq, n etl — լիտ. minū, minti «կոխող»⁴: նման կապը ժամանակին մերժել է Ա. Մելիքը:

Գ. Զահուկյանը, հիմնվելով Հ. Աճառյանի հիշյալ ստուգաբանական փորձի վրա, կամեն-ը բխեցնում է հ.-հ. *gem—«բռնել, սեղմել, ճնշել, ճխտել» բայից, իսկ կամ-ը՝ հ.-հ. *gim-ից⁵: Նույն արմատին է հանգեցվում հայ. եմլել-ը, ույլն՝ հակառակ. kumla «ճմլել, ճզմել, ջարդել», ոուս. жать (жму) և այլն: Այնուհետև, հայ. կամահարել «արտահարել» բայի⁶ կամ բաղադրիչը ևս նույնաղբյուր է կամեն, կամ արմատի հետ: Այս դեպքում նշենք, որ ա) անտեսված է Ա. Վարդանյանի բանասիրական ճշգրտումը՝ կապված կամացն (<*կամ) սխալագրության հետ, բ) կամեն-ը հ.-հ. *gem-, իսկ ոչ ճիշտ կամ ձևը հ.-հ. *gim- ձևերին հանգեցնելը թերևս տեսականորեն է ճիշտ, իսկ իրականում տեղին չէ, գ) կամեն և նմ(ի) արմատները կապ չունեն միմյանց հետ, քանի որ իմաստով անհամատեղելի են («ծծել, կալսել» և «սեղմել, ճզմել»):

¹ Յովհաննու Ոսկերիանի յԱւետարանադիրն Մատթէոս, հհ. Ա—Բ, Վննտիկ, 1826, էջ 745, Փոստառսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց (վերատպ.). Երևան, 1987, էջ 220:

² Ա. Վ ա ռ դ ու ն յ ա ն. Բառարկական նոր դիտողություններ. — «Հանդես ամսօրյա», 1921, 7—8, էջ 410—411:

³ Սուրբ Գրք, Աստուածաշունչ մատեան Հին և նոր լիտակարանաց. Կ. Պոլիս, 1895 (նսալի, ԻՆ, 10—11): Պատմութիւն Զորարիս Սարկաւադի. Վաղարշապատ, 1870, էջ 83:

⁴ Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան. հրատ. II, հ. 2, Երևան, 1973, էջ 502: М. Ф а с м е р. Этимологический словарь русского языка. Изд. II, тт. 1—4, М., 1986—1987, с. 474.

⁵ Գ. Զ ա հ ու կ յ ա ն. Աստղարանություններ. — «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 1, էջ 256:

⁶ Բառգիրք հայոց Երեմիայ վարդապետի. Տալիկոնայ, 1698, էջ 154:

⁷ Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ. 2, էջ 500:

Հետագայում կամն բառի ստուգաբանությունը Զահուկյանի կողմից իսկ դիտվում է ոչ հավաստի, ուստի նշվում է հարցականով, այսինքն՝ «կասկածելի համարվող ձև», այլև հատուկ նշանով (+) զանազանվում է ավելի հավաստի, ստույգ ձևերից⁸։ Դրանք արտացոլված են Յ. Պոկոռնու և Հ. Աճառյանի բառարաններում⁹։ Իսկ հեղինակի մեկ այլ աշխատության մեջ ուղղակիորեն նշվում է հետևյալը. «Զիմանյով հայ. կամն «ծածիլ» բառի ծագումն՝ անկարելի է հաստատել մի պատկանելությունը արմատին կամ ածանցին»¹⁰։

Մեր կարծիքով հայ. կամն բառը ծագում է հ.-հ. *ak^[h]men «քար» բառից՝ իբրև —ն հիմքով գոյական անուն. հհնդկ. āsman- «քար», լիտվ. akmuo, akmuonis «քար», հսլավ. kamy «քար»¹¹։ Այս առումով անհրաժեշտ է նշել հետևյալը։ ա) Հ. Բ. *k^[h]-ն, իբրև օրինաչափություն, տալիս է հայ. ց, ս, շ, այլև բացառիկ դեպքերում՝ կ. հ.-հ. *k^[h]āk^[h] > հայ. ցախ (հմմտ. հհնդկ. śakha, «ճյուղ», լիտվ. šaka «ճյուղ», սլավ. socha «ցից, արոր», po-šochū «դափազան», այլև գոթ. hōha «գութան»), հ.-հ. *k^[h]er- > հայ. սիրտ [հմմտ. լոնթ. kl-ir «սիրտ», սեռ. kar-dī-aš «սրտի», հուն. καρ «սիրտ» այլև հհնդկ. śrad (<śrad-dhā հավատարմ)], հ.-հ. *k^[h]u(e/o)n- > հայ. շուն (հմմտ. հիբր. ցուփ. šu-wa-nā-l «շներ», այլև հհնդկ. ś(u)ā, հույն, սեռ. šūnas, լիտվ. šuo, սեռ. šuns, հուն. κυων, սեռ. κυων «շուն, շների կամ չան» և այլն), լեռնապետ նաև՝ հայ. սկունդ «շուն, շիկ» (հմմտ. լատ. canis «շուն», հիւլ. κύ, սեռ. con «շուն»), հ.-հ. *suk^[h]ru-/*suk^[h]uro- > հայ. սկսուր «ամուսնու մալր» (հմմտ. հսլավ. svekry «սկսուր», հուն. ἐκρυ «սկսուր» և այլն)¹²։ բ) Ինչպես հայտնի է, նման տարբերակումն առնվում է հ.-հ. լեզուների centum և satəm բարբառային խմբավորմանը՝ իրենց օրինաչափություններով և բացառություններով հանդերձ. քմային հետնալիզվային *k^[h]-ին համապատասխանում է հայ. պաթական, այլև շփական բաղաձայն¹³։

Փորձ է արվել հայ. սկունդ-ը (<հ.-հ. *k^[h]uon-to ձևով) կապել խոտանասակ. (սկյութ.) կամ սկյութ-սլավ. լեզուներին¹⁴։

8 Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան. Երևան, 1987, էջ 125։

9 J. Pokorny. Indogermanisches etymologisches Wörterbuch 1—2, Bern—München, 1959—1969։ Հ. Աճառյան, նշվ. աշխ.։

10 Գ. Բ. Джаукян. Сравнительная грамматика армянского языка. Ереван, 1982, с. 116—117, այլև 222։

11 Հմմտ. Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. Индоевропейский язык и индоевропейцы: Реконструкция языка и историко-типологический анализ протокультур. I—II, Тбилиси, 1984, с. 112, 184, 297.

12 Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. Указ. соч.; Г. Բ. Джаукян. Очерки по истории дописьменного периода армянского языка. Ереван, 1967; О. Szemerényi. Syncope in Greek and Indo-European and the nature of Indo-European ablaut.— Instituto universitario orientale, Napoli, 196; В. М. Иланич-Сви-тыч. Один из источников начального X—в праславянском.—Вопросы языкознания, 1961, 4։

13 Հմմտ. В. И. Абаев. О принципах этимологического исследования.—В кн.։ Вопросы методики сравнительно-исторического изучения индоевропейских языков. М., 1956, с. 286—307, 293.

14 В. И. Абаев. Скифо-европейские изоглоссы. На стыке Востока и Запада. М., 1965, с. 21—22.

2. ՍՈՒՆԵԼ <հ.-հ. *k' ern-

Հայերեն դրավոր աղբյուրներում չի հանդիպում սոն(ել) բառը: Սակայն գործածվում է հայերենի մի շարք բարբառներում (Մուշ, Ալաշկերտ, Բուլանիս, այլև Աղարան) և նշանակում է «խոշոր աղալ»: Բառը գտնվում ենք Հ. Աճառյանի «Հայերեն զավառական բառարանում» Ս. Ամատունու բառարանում և Երվ. Լալայանի «Ազդագրական հանդեսում»¹⁵, Այսօր ես բառը գործածական է հիշյալ բարբառներում:

Բառը չենք գտնում Հ. Աճառյանի «Արմատական բառարանում», ինչպես նաև հայերենին նվիրված ստուգաբանական այլ աշխատություններում: Կարծում ենք, որ սոն(ել)-ը բնիկ հայերեն բառ է, որ մեզ է ավանդվել բարբառային, այսինքն՝ ոչ ընդհանուր դրական գործառնությամբ: Այն ներկայացնում է հ.-հ. ընդհանրությունից եկող որոշակի հասկացության անվանում՝ կապված բնատնտեսության կազմակերպման հետ:

Սոն(ել) բայի իմաստը պիտի փնտրել հատիկ բառի մեջ, որովհետև «խոշոր աղալ» իմաստի նախնականն այլ բան չի եղել, քան «հատակտոր անել», հատիկն ևրկու կես անել: Աճառյանը, նշելով բառի գործածությունը միայն Մուշի բարբառում, ճիշտ է բացատրում իմաստը. «խոշոր աղալ, այնպես որ ցորենի կամ կորեկի երկու-երեք կտոր ըլլայ»:

Հայտնի է, որ հ.-հ. *^uernos նշանակում էր «հատիկ»¹⁶, որն ավելի շուտ կապվում էր սերմը ցանելու գաղափարի հետ, ուստի բնորոշ էր համարվում հ.-հ. արևմտյան տարածքի լեզուներին: Իսկ առհասարակ «աղալու, մանրելու» իմաստի համար հ.-հ. *k'^ora^u- «աղաց» բառն է գործածվել¹⁷. Հայերկան (<*h-կր-ան). հմմտ. *g^urawana-, *g^ura^u-āna, *g^ura-a ձևեր¹⁸:

Մեր կարծիքով, հայ. (բրբռ.) սոն(ել) բառը ծագում է հ.-հ. *k' ern «աղաց» իսկից [*k'^oer- կամ *k'^oar-. հմմտ. գոթ. -qairnus «աղաց», հնդկ. gurū- «ծանր», հույ. γαῖς «ծանր», լատ. gravis «ծանր», լատվ. dzīrnis «երկանք», լիտվ. žūnus (հոպ.) «երկանք», հսլավ. žūnovu «աղաց»]¹⁹: Ըստ այսմ ամենավաղ շրջանի հայերենում, այսինքն՝ հայերենի ինքնուրույն լեզու դառնալու ժամանակ միևնույն արմատի տարբերակ են եղել ե-րկ-ան բառի *րկ-ան-ը (*կր-ան) և սոն-ել բայի սոն արմատը՝ ձայնավորման տարբեր աստիճաններով, այլև կ/ս տարբերակումով: Նման տարբերակումը դառիս է հ.-հ. ընդհանրությունից, որովհետև վերջինիս մեջ ևս ունենք *k'^oern- և *k'^ora^u-, եթե ոչ նաև *k' ɣ n- տարբերակումը²⁰:

Հայտնի է նաև, որ հ.-հ. *k'^oern- «երկանք» բառը փոխառյալ է սեմականից. սեմ. *gurn «կալ, հոսք» > ուգար. ցրն «հոսք», աքադ. mak'grattu

15 Հ. Աճառյան. Հայերեն զավառական բառարան.—Էմինյան ազդագրական ժողովածու, Մոսկվա, 1911, 6, էջ 984: Հայոց բառ ու բան, աշխատասիրես Սահակ վրդ. Ամատունի. Վաղարշապատ, 1912, էջ 599: Ազդագրական հանդես, պատկերազարդ, հրատ. Երվանդ Լալայան, դիրք Ե, Տփլիս, էջ 77:

16 Հ. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն. մաս 1, Երևան, 1940, էջ 16:

17 Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. Указ. соч., с. 693.

18 H. Hübschmann. Armenische Grammatik, I Teil, Armenische Etymologie. Leipzig. 1897, S. 444--445; Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 61, Г. Б. Джаукян. Очерки по истории дописьменного периода армянского языка. Ереван, 1967, с. 226. Ն ու յ ն ի՝ Հայոց լեզվի պատմություն, էջ 120, այլև 430:

19 Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. Указ. соч., с. 175.

20 Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. Указ. соч., 93, 693, 868—869, 873. Երկանք կամ աղաց դործիքի նվրոպա թափանցելու ժամանակ է դիտվում, ոչ անկախ Զ. Կ. Դ. Կլարկից, մերթ մ. թ. ա. I, մերթ մ. թ. ա. III հաղարամյակը, Առաջավոր Ասիայի տարածքից, որ թերևս վրիպում է, ոչ թե հակասություն (նույն տեղում, էջ 694, 869):

«հորթ, մամլատեղ», հօր. goren «հորթ», արար. garana «աղալ, մանրել», gurn- «հորթ»²¹; Ուստի ինչպես երկան «երկանք», այնպես էլ սոն(ել) «խոշոր աղալ» բառերն ունեն ծագումնային տեղական պատմություն, հանդիսանում են սեմականից կատարված հ.-հ. հնագույն փոխառություն²²:

АРМЯНСКИЕ ЭТИМОЛОГИЧЕСКИЕ ЗАМЕТКИ

Доктор фил.юл. наук В. Г. АМБАРЦУМЯН

Резюме

В статье дается этимология двух арм. слов — *համլ* *katn* «молотильная доска» и *սոն(ել)* *stn(el)* «крупно молотье».

Слово *համլ* *katn* происходит от и.-е. **ak^[hl]men* «жернов» (ср. др.-инд. *āsman-* «камень», лит. *akmuo*, *akmuens* «камень», ст.-слав. *katu* «камень» (см. Гамкрелидзе, Иванов, 1984, с. 112, 184, 297). По этому поводу следует отметить следующее: 1) И.-е. **k^[hl]* закономерно дает арм. *g* *с*, *и* *с*, *г* *с*. иногда, в некоторых случаях, — *к*: напр. и.-е. **k^[hl]ak^[hl]* > арм. *ցահ* *sax* «бревно, хворост» (ср. др.-инд. *sakha* «ветка, ветвь», лит. *šaka* «ветка, ветвь», ст.-сл. в *socha* «кол, плуг», русск. *ш* «трость, палка», еще: гот. *holna* «плуг»), и.-е. **k^[hl]er-* > арм. *սիրտ* *sirt* «сердце» (ср. хетт. *ki-lr* «сердце», род. п. *kar-di-aš* «сердце», гр. *χρ* «сердце», а также др.-инд. *śrad* (<*śrad-* *dha* «верить»), и.-е. **k^[hl]u* (e o) *n* > арм. *շուկ* *syn* «соя» (ср. ивр. лев. *šn-wa-pa-l* «собаки», а также др.-инд. *s(u) ā*, род. п. мн. ч. *sūpas* «собак», лит. *šio*, род. п. *šuns* «собаки», гр. *κύων* «собака», род. п. *κύων* «собаки» и т. д. а также грм. *skund* «собака, собачка», ср. лат. *canis* «собака», др.-ирл. *cá*, род. п. *con* «собака»), и.-е. **sq^[hl]ku-/sq^[hl]u* > арм. *սկեսուր* *skezur* «свековье», (ср. ст.-слав. *svegru* «свековье», гр. *εγκυρ* «свековье» и т. д. (см. Гамкрелидзе, Иванов, 1984, с. 97, 100, 112. Джаукян, 1967, с. 228—229, Sze me rényi, 1964, с. 591, Иллещ-Свитыч, ВЯ, 1961, с. 93). 2) Как известно, такое распределение согласных с двумя группами диалектов и.-е. языков на *centum* и *satem*, со своими закономерностями и исключениями; и.-е. палтальному этднеязычному в арм. соответствует взрывное, а также аспирированное согласное (ср. Абаев, 1956, с. 293). Арм. (дчал.) слово *սոն(ել)* *stn(el)* «крупно молотье» происходит от слова и.-е. **k^[hl]ern* «жернов» (<**k^[hl]er-* или **k^[hl]er*) (ср. гот. *-qairnus* «жернов», др.-инд. *guri-* «тяжелый», гр. *βαρύς* «тяжелый», лат. *gravis* «тяжелый», латыш. *dziļņus* «жернов», лит. *griņus* (мн. ч.) «жернов», ст.-слав. *žurnovъ* «жернов») (см. Гамкрелидзе, Иванов, 1984, с. 175). Таким образом, в арм. языке, в самую древнюю эпоху его развития, т. е. в эпоху, когда арм. ф. рмы **rh-wn* и **hr-wn* являлись вариантами слова *հ-րհ-wn*, а также корни *սոն* слова *սոն(ել)* в отношении вариантов *kh/us*, такое варьирование вытекает из и.-е. общности, потому что в последнем также имеем варианты на **k^[hl]ern* и **k^[hl]er*, еще **k^[hl]u* (см. Гамкрелидзе, Иванов, 1984, с. 93, 693, 868—869, 873). Известно также, что и.-е. *k^[hl]ern* «жернов» является заимствованием с семитских языков: сем. **gurn* «гумно; ток» > угар. *gip* «ток», аккад. *mak grattu* «ток, место судилища», др.-евр. *goren* «ток», араб. *garana* «молоть», размыслить», *gurn* «ток», (дигл.) «ступка» и т. д. (см. Гамкрелидзе, Иванов, 1984, с. 873—874). Таким образом, арм. слова *հրհ-wn* «кап, жернов» и *սոն(ել)* *stn(el)* «крупно молотье» имеют длительную историю происхождения, являются древнейшими заимствованиями в эпоху общности и.-е. языков из семитского (ср. Джаукян, 1987, с. 450).

²¹ Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов, Указ. соч., с. 873—874.

²² Գ. Համարձույան. Հանդիսանում է պատմություն, էջ 450.